ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ | 2021

Սիրելի՛ ընթերցողներ, սիրով ներկայացնում ենք Ձեզ ԵՆԿ հերթական ամսաթերթը, որում կպատմենք կազմակերպության հուլիսից օգոստոս ամիսների անցուդարձի մասին:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՔԱՂԱՔ

Մեկնարկել է «Երիտասարդների քաղաք. զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման գործընթացում երիտասարդների դերի բարձրացում» խորագրով երկարաժամկետ Էրազմուս+ ծրագրի առաջին փոխանակման ծրագիրը Վրաստանի Քոբուլեթի քաղաքում՝ «Երիտասարդությունը ձեռներեցության համար» խորագրի ներքո: Ծրագրի միջոցով մասնակիցները հնարավորություն են ստանում փոխանակվելու իրենց փորձով և շոշափելու ձեռներեցությանը, միջմշակութային հաղորդակցությանը, զբոսաշրջությանը և հյուրընկալության ոլորտին առնչվող թեմաներ:

Մեկնարկել է «Երիտասարդների քաղաք. զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման գործընթացում երիտասարդների դերի բարձրացում» խորագրով երկարաժամկետ Էրազմուս+ ծրագրի երկրորդ փոխանակման ծրագիրը քաղաք Գյումրիում՝ «Երիտասարդությունը ձեռներեցության համար» խորագրի ներքո:

Բիզնես գաղափարների վերջնականացում և ներկայացում, ծրագրի գնահատում և հրաժեշտի երեկո:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

EMPLO(YOU!)TH

Գյումրիում մեկնարկեց «EMPLO(YOU!)TH. Հայաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում հավասարակից ուսուցման միջոցով երիտասարդների աշխատունակության խթանում» ծրագրի աշխատունակության թեմայով առաջին դասընթացը, որին մասնակցում են 15 երիտասարդներ՝ Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի և Արմավիրի մարզերից:

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն անցկացրեց աշխատունակության թեմայով առաջին դասընթացը՝ «EMPLO(YOU!)TH. Հայաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում հավասարակից ուսուցման միջոցով երիտասարդների աշխատունակության խթանում» ծրագրի շրջանակներում:

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն Գյումրիում անցկացրեց երկրորդ դասընթացը՝ «EMPLO(YOU!)TH. Հայաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում հավասարակից ուսուցման միջոցով երիտասարդների աշխատունակության խթանում» ծրագրի շրջանակներում: Դասընթացի թեման վերաբերում էր աշխատանքային իրավունքին և հարակից ոլորտներին:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

MOBILITY WITH YIC

Խորվաթիայի Կարլովաց քաղաքում տեղի է ունեցել «Look Behind The Veil» խորագիրը կրող Էրազմուս+ միջազգային դասընթացը երիտասարդական աշխատողների համար՝ սոցիալական ներառականության թեմայով:

Վրաստանի Միսաքցիելի քաղաքում տեղի է ունեցել «On The Move» խորագիրը կրող Էրազմուս+ երիտասարդական փոխանակման ծրագիրը միգրացիայի և մարդու իրավունքների թեմայով:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

C.O.A.C.H.

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը «Career Orientation Aimed at Community Happiness» (C.O.A.C.H.) երկարաժամկետ համագործակցային ծրագրի շրջանակներում իրականացրեց «Career of my Dream» խորագրով աշխատարան 14-18 տարեկան երիտասարդների համար: Աշխատարանի նպատակն էր աջակցել երիտասարդներին իրենց նպատակների սահմանման և մասնագիտական կողմնորոշման հարցում:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

«ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ»

2021 թ. հուլիսի 7-ին ՄԱԿ-ի գրասենյակի հանդիպումների սրահում և օգոստոսի 14-ին «Բեռլին Արթ» հյուրանոցի հանդիպումների սրահում տեղի ունեցան «Կորոնավիրուսի համավարակի պայմաններում երիտասարդների հոգեկան առողջության վերաբերյալ համապետական հետազոտություն» զեկույցի ներկայացում - քննարկումներ:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

ԿՅԱՆՔԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Կյանքի հիմնարար հմտություններ դեռահասների համար» ծրագրի շրջանակներում թվով 155 դեռահաս Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերից մասնակցել է կյանքի հիմնարար հմտություններ թեմաներով դասընթացների շարքին, որից հետո երիտասարդները հնարավորություն են ունեցել թիմերով իրականացնել թվով 24 համայնքային նախաձեռնություններ։

Այնուհետև երիտասարդները հանդիպում են ունեցել մարզային ու քաղաքային իշխանությունների ներկայացուցիչների հետ և ներկայացրել իրենց կատարած աշխատանքը։

Ծրագիրն ավարտվեց ամփոփիչ միջոցառումներով, որտեղ երիտասարդները կարողացան գնահատել ծրագիրն ու պարգևատրվեցին վկայականներով և նվերներով։

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

UPSHIFT ՍՊԻՏԱԿ

Հուլիսի 12-ին և 13-ին Սպիտակի թիվ 8 միջնակարգ դպրոցում «UPSHIFT Սպիտակ» դեռահասների զարգացման և համայնքային ներգրավվածության խթանման ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ «BootCamp» համայնքային երիտասարդական ծրագրերի ներկայացման երկօրյա հանդիպումը:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ ԳՅՈՒՄՐՈՒ ԵՆԿ ՀԿ-ՈՒՄ

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի քոլեջի սոցիալական աշխատանք բաժնի առկա ուսուցման 2-րդ և 3-րդ կուրսի ուսանողները իրենց ուսումնական պրակտիկան են անցկացրել Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունում»:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏՈՒՆ

Ամառային արձակուրդները պատանիների ու երիտասարդների համար ավելի հետաքրքիր ու բազամաբովանդակ են դառնում մասնակցելով «Գյումրու երիտասարդների տան» կողմից կազմակերպվող տարատեսակ միջոցառումներին ու կրթական ծրագրերին:

Հուլիս ամիսը սկսվեց անգլերենի խոսակցական ակումբի ավարտով, որի շրջանակներում իրականացրած կամավորության համար հավաստագիր տրվեց անգլերենի խոսակցական ակումբի ղեկավար Վարդուհի Հակոբյանին:

Օգոստոսն ամենասպասված ամիսն է երիտասարդների համար. երիտասարդության միջազգային օրվա վառ տրամադրությունը սաները փոխանցեցին շնորհավորական լուսանկարներում:

Օգոստոսի 14-16-ը կենտրոնում 16-18 տարեկան 15 երիտասարդներ մասնակցեցին «Ավագ դպրոցի աշակերտների առաջնորդության եռօրյա դպրոցին»: Առաջիկայում մասնակիցները հանդես կգան իրենց նախաձեռնությունների իրականացմամբ:

«Գյումրու երիտասարդների տան» տարածքում օգոստոսի 17-21-ը կազմակերպվեց բակային ճամբար 10-12 տարեկան քսանհինգ երեխաների մասնակցությամբ, որն իրականություն դարձավ կանադահայ բարերարներ Վիգեն Շամլեանի և Կատերինա Ալվարոյի նվիրատվությամբ:

«Այբ» կրթական հիմնադրամի կողմից կազմակերպված տեղեկատվական հանդիպման շրջանակներում կենտրոնի սաները ծանոթացան «Քան» ակադեմիայի անվճար առցանց կրթական ռեսուրսներին, իսկ աշխատարանի ընթացքում գործնականում կիրառեցին և փորձեցին իրենց գիտելիքները։

ՀԵՏԵՎԵԼ ԷՋԻՆ